

Հրատարակում են Թիֆլիսի Ընկ. Հայերէն գրքերի հրատ.

№ 18

Փ Ն Ջ Ի Կ

Գ Ր Ե Յ

ԱՂԷՔԱՆԴԻ ԱՐԱՐԱՏԱՆՅ

ԹԻՖԼԻՉ

ՏՊԱՐԱՆ ՅՈՂՀԱՆՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՅԻ

ՍՐԵՒԵՐԵՆ ՓՈՂՈՅ. Տ. 1 | 2.

1885

Սերեր
297

5750

2

2003

Հրատարակուած ին թիֆլիսի Ընկ. Հայերէն գրքերի հրատ.

Սերէք

297

№ 18

Փ Ն Զ Ի Կ



ԱՂԻՔԱՆԴԻ ԱՐԱՐԱՏԵԱՆՅ

ԹԻՖԼԻՉ

ՏՊԱՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՅԻ

ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, Տ. 1 | 2.

1885



297.2003

(4438/41)

Дозволено цензурою. Тифлисъ, 3 Декабря 1884 г.
Типографія И. Мартиросіанца, Орбел. ул., д. № 1/2.

ՍԵՐՄՆԵՑԱՆ

«Ուր ես գնում, ա՛յ գիւղացի,
Բեռան տակին տնքալով.
Այդ ի՛նչ բեռն է՝ որ շալկած ես,
Ու տանում ես խնդալով»:
—Արի՛ ինձ հետ, դու կը տեսնես՝
Ուր եմ գնում տնքալով.
Երկրի յոյսն է իմ շալակին՝
Ես տանում եմ տանջուելով...
Ասաց, գնաց, էլ չը խօսեց,
Ինչքան նրան զօռեցի...
Իր յէջի մօտ կանգնեց, նայեց,
Փանր բեռը ցած դրեց:
—Այժմ դու տես, թէ՛ ես ի՛նչպէս
Սերմ կը ցանեմ շաղ տալով.

Իմ այս գործից կը զուշակես,
Թէ հըր եկայ տանջուելով:

Ասաց, կապեց իր գոգնոցը,
Ապա նայեց երկնքին.
Սիրտը խօսեց, լեզուն շարժուեց...
Ես նայեցի արցունքին...

«Կապհուտ երկինք, Հալալ սրտով
Քեզ եմ կանչում՝ միայն քեզ,
Որ դու արև-անձրև շատ տաս.
Իմ այս սերմին՝ սրբի պէս...
Դու լաւ գիտես թէ քանի՛ մարդ
Աչք կը դնի ցանածիս,
Քանի՛ պարտքեր ու պատուհաս
Միշտ կը սպասեն սերմածիս...»

Այսպէս ասաց ու երեսին
Խաչակնքեց դողալով,
Սերմը լցրեց գոգնոցի մէջ՝
Սկսեց ցանել իր բռնով...

Յանկարծ մի մուկ վազեց, թռաւ,
Նորա առջև ծվծվաց.

«Մեզ Համար էլ սերմը ցանիր,
Որ չը կրենք ողջ սերմած...»
— Ահա... այս ձեր ցեղին լինի,
Պտղաբերուի ձեզ Համար.
Միայն ցանքիս ձեռը չը տաք,
Մեղք եմ, մոռկիկ, ու անճար...

Երկրորդ բուռը դեռ չէր ցանել,
Մի մեծ մորեխ երևաց.
«Մեզ էլ մասը տուր քո սերմից,
Որ չը լափենք կանաչած...»
— Այս էլ ահա... ձեզ եմ տալիս,
Թող շատանայ ձեզ Համար.
Կանաչ արտիս վնաս չը տաք,
Խեղճ եմ, անտէր ու անճար...

Երրորդ բուռը դեռ չէր ցանել,
Մէկ էլ տեսնես մի մրջիւն.
«Մեզ էլ մաս տուր, թէ չես ուզում՝
Սերմդ կրենք մի անկիւն...»
— Ձեզ շատ լաւ եմ ես ճանաչում,
Ա՛յ մրջիւններ, անկուշտ էք.
Ահա... այս էլ թող ձեզ լինի,
Ողջ սերմածս չը կրէք...

Յետոյ յանկարծ կաշաղակը
 Թռաւ, եկաւ նրա մօտ.
 «Պարոն, մեզ էլ մարդատեղ դիր,
 Մենք գողեր ենք, չենք երկչոտ»:
 —Ահա... այս էլ թռչնոց դասին,
 Դուք չունենաք քէն ու ոխ.
 Իմ ցանածը չը ժողովէք,
 Մեղք եմ, խեղճ եմ, պարտքակոխ...

Մէկ էլ յանկարծ վերեւ նայեց,
 Տեսաւ մի ծեր ալւոր.
 «Բարի, ո՞վ ես, ինչ ես ուզում,
 Մարդ ես թէ սուրբ զօրաւոր»:
 —Երբեմն, այո՛, ես մարդ էի,
 Բայց այժմ եմ թւաւոր.
 Իմ պալատը ամպերի մէջ՝
 Զուրջս քաջ-քաջ ձիաւոր:

Իմ պալատից դուրս են թռչում
 Սրեր, նետեր հրեղէն.
 Իմ պալատից վայր են թափվում
 Բիւր կարկուտներ սառցեղէն...

Դու խոստացիր, որ տաս առատ
 Ողորմութիւն աղքատաց.


Ապա թէ ոչ՝ Դարձա՞ս իբրեւ
 Քո ցանածին անաստուած...

Ասաց, պռծաւ, դէմքը շրջեց,
 Էլ չերևաց ծերունին.
 Իսկ զիւղացին դողաց, սարսեց,
 Եւ թռթռաց իր հողին:
 —Ո՛վ սուրբ, փրկիւր մեր այս հանդին,
 Հեռու պահիր կարկուտից.
 Ահա... այս էլ «խաչի-սէրը»,
 Թող ազատուենք վտանգից:

Վերջին անգամ խեղճը լիշեց
 Աղքատներին լալաչքով,
 Եւ տէրտէրի, օտարների
 Մասը սերմեց սուրբ սրտով:

Ապա կանգնեց ակոսի մէջ,
 Աչքը քցեց երկնքին.
 «Ինչ էլ մնաց՝ այն ինձ տուր, տէր,
 Հնձեմ, կախեմ, տամ պարտքին...»

«Ի՞նչ ես տանում, ա՛յ ղիւղացի,
 Բեռան տակին տնքալով»:
 —Երկրի յոյսն է իմ շալակին՝
 Ես տանում եմ խնդալով...



ԿԱԼԻ ԵՐԳ.

«Եզր ջան, կա՛լ արա, կալիդ ման արա,
 Հասկերը փշրի, ցորեն դուրս արա,
 Հաշանը տրորի, լաւ դարման արա:
 Ես ու դու մին ենք, իրար եղբայր ենք,
 Մինչև երեկոյ իրար հետ բանենք.
 Ես երեկոյեան կալը կը թեղեմ,
 Դէպի կանաչ խոտ քեզ բաց կը թողնեմ.
 Լուսնակ գիշերին թեզը կը քամեմ,
 Յորեն-դարմանը իրարից ջնկեմ.
 Դարմանը մզանով մարաքը կածեմ.
 Յորենը ջուալով ամբարը լցնեմ:

Երբ որ ձմեռը կը գայ, կը մրսենք,
 Դուք դարման կուտէք, մենք ցորնով կապրենք:
 Եզր ջան, կալ արա,
 Կալիդ ման արա...»

«Եզր ջան, եղբայր, դու իմ աջ կուռն ես,
 Իմ թեւ ու թիկունք, դու իմ տան դուռն ես.
 Քեզ որ չունենամ՝ արտ չեմ ունենալ,
 Կալ էլ չեմ կասիլ, ցորեն ստանալ:
 Կա՛լ արա, մատաղ,
 Դառն է քեզ մատաղ...»

«Եզր ջան, քեզ հետ աշխատում եմ բանում,
 Դաշտում, արանում վար ու ցանք անում.
 Բայց այդ ցանքը արմատից կերած,
 Դեռ կանաչ վախտը հնձած եմ բաժնած:
 Յորնի պարտքը չէ իմ այս ասածը,
 Դարդ ու կրակ է իմ վզին դրածը.
 Փողի պարտք ունեմ-ցորնից եմ տալիս,
 Հարկ ու բեզառը ցորնից դուրս տալիս.

Տան կարիքները ցորնով եմ հոգում,
Տէրտէրի հարկը ցորեն վճարում.
Աղքատ-անճարին ցորեն եմ բաշխում,
Աշըղի, Աթուի ցորնից մաս հանում.
Խօսքով, ցորենը մեր բոլոր լոյսն է,
Մեր շունչ պահողը, մեր աչքի լոյսն է...
Ման տուր, իմ եղբ՝
Ասլի քու պողը...»



ԽԱԽԱԼ ԱՆԵՄ, ԱՂՈՒՆ ԱՆԵՄ.

«**Ա**տուրը սրբել, կապերտ եմ փռել,
Դեղին ցորենը վրէն շաղ տուել.
Նրան ժամէ ժամ ձեռքովս խառնում,
Ամեն խառնելիս Տէրին «փառք» կանչում:
Ասում եմ. Աստուած, մաճկալին ուժ տուր,
Լծկան տաւարին ուժ ու զօրութիւն.
Աստուած, մեր հանդին-ցանքին անձրև տուր,
Մեր աշխատանքին պտղաբերութիւն:

Ասում եմ. Աստուած, երկրի երեսին
Քաղցածներ շատ կան՝ կարօտ չոր հացին.
Ուղարկիր նրանց՝ իրանց մասը տամ,
Աջ ձեռս ձախին սկի նշանց չը տամ...»

* * *

«**Ե**կէք, այ թռչունք, էլ մի ծվժվաք,
Եկէք ցորեն տամ, ապա ծվվաք:
Դուք էլ, իմ հաւեր, էլ մի կչկչաք,
Եկէք ցորեն տամ, ապա կրկրչաք:
Արի, այ մըջիւն, դու էլ շունչ ունես,
Արի հատիկ տամ, որ ապրուստ անես:
Արի, այ աղքատ, էլ մի ամաչի,
Արի բաժին տամ, դու Աստուած կանչի...»

* * *

«**Ա**մենքը եկան, բաժին ստացան,
Ամենքը կերան, կուշտ-կուշտ հեռացան.
Յետոյ մայրիկը ցորենը ժողվեց,
Կապերտին նստեց ու «դա՛ն» արեց:
Նա ո՛նց խախալեց, ձեռքը ո՛նց շարժեց.
Ահա ձեզ ասեմ, թէ ինչպէս արեց:

Խախալը կիսատ լցրեց ցորենով,
 Աջ ու ձախ բռնած շարժեց նա տակտով.
 Առաջ «տար ու բեր» օրօրի նման,
 Յետոյ «պտուտակ» ինչպէս մի երկան:
 Այս տակտում ցորնի կուտը ժողովուեց,
 Նա նորան հաբուեց՝ առաջը ածեց:
 Այսպէս միքանի անգամ նա կրկնեց,
 Վերջում խախալը կամաց թէք բռնեց,
 Հիմքին ձեռափով խփեց ու թմկեց.
 Մաքրած ցորենը ջուալը ածեց,
 Եւ այսպէս երկար նա շարունակեց...

* * *

Նա շարունակեց
 Եւ կամաց երգեց.

«Խախալ անեմ, աղուն անեմ,
 Անգութ կնգայ աչքը կարեմ...»

Հորեր ունեմ ցորնով լիքը,
 Ամբար ունեմ գարով լիքը:
 Կարասները լիք են գինով,
 Պուլիկները՝ եղ ու պանրով...

Տունս հարուստ, ամենքն են կուշտ,
 Մեր տան շէմքից ով կրնի հոնշտ.
 Դուռը բաց ա, սիրտը բաց ա,
 Նա շատերի ծոցի հաց ա...
 Այ՛ կնանիք, Աստուած թող տայ,
 Ձեր տներն էլ լցուի, գէշ տայ.
 Միայն խեղճը, չքաւորը
 Թող չամաչի մեկնեւ բուռը.
 Որ նա չունի մի «ցորնահաց»,
 «Ցորնալեզուն» թող անի բաց...
 Խախալ անեմ, աղուն անեմ,
 Անգութ կնգայ աչքը կարեմ...»



ԵՐԿՈՒ ՔՈՅՐ.

(Հ Ի Ն Ղ Ր Ո Յ Գ)

Մի խեղճ գիւղացի իր բոլոր կեանքում
 Լաւ օր չէր տեսել. միշտ ցրտում-տաքում

Գառը տանջանքով քրտինք էր թափել,
 Իր տանըցոնցը պահել, կերակրել:
 Այս մարդին Աստուած տղայ չէր տուել,
 Երկու աղջիկ էր միմիայն բաշխել.
 Թագուշու տղեղ ու խիստ հաստիկ էր,
 Վարդուշու սիրուն — միայն կաղիլիկ էր:
 Խեղճ աղջիկները հենց աչք էին բացել,
 Իրանց ծնողացը միշտ թշուառ տեսել.
 Զուտով տարիներ անցան, սահեցան,
 Եւ երկու քոյրը հասան, մեծացան:
 Նրանց սեւ բաղդը մնաց միշտ փակուած,
 Քարին ու կապին դէմ ընկած, կապուած...

«Այ կին, քնչ անենք, մի օր խեղճ մարդը
 Վերջապէս յայտնեց կնոջն իր դարդը.
 Երեսուն տարուան մենք պսակուած ենք,
 Երեսուն հազար ցաւեր կրած ենք.
 Յաւ ու կսկիծը մէկ տեղ ենք տարել,
 Ամեն կսկծալիս Աստծուն փառք տուել...
 Բայց ահա այսօր ուժերս թլուած,
 Երեսիս մազը սիւստակած, կծղած,

Գառն աշխատանքը կոտրել է մէջքս,
 Պակսել արիւնս, ցամքել քրտինքս...»
 —Ո՛հ, լաւ է, լաւ է, քանի՛ ինձ այրես,
 Այդ սուր խօսքերով ջիգարս դադես.
 Մի՛թէ ես քեզ հետ ընկեր չեմ եղել,
 Մի՛թէ ես եւս ուժից չեմ ընկել.
 Կամ պակաս վախտը երբ եմ խօսեցել,
 Ուրիշի նման երեսիցդ կպել...
 Երեսուն տարի կայ՝ քեզ հետ տանջվում եմ,
 Եւ քո տանջանքը թեթեւացնում եմ...
 Մեր շունչ պահուշու մեզ չի կորցնի,
 Մի կտոր չոր հաց միշտ կը հասցնի...
 Ասաց խեղճ կինը, հառաչեց, լուեց,
 Եւ իր արցունքը մարդիցը ծածկեց...

Փիւղացու տունը, արդարեւ, տուն չէր,
 Գետնափոս որջի նա շատ նման էր.
 Պատուհան չունէր. իսկ դուռը նեղիլի,
 Վերեւից բացած անճուռնի երդիլի:
 Ներսից չորս հաստ սիւն նեցուկ էին տան,
 Հէնքը ծակ ու ծուկ՝ խախալի նման...

Մի նիհար կատու միշտ մլաւում էր,
 Տիրոջ ոտքերովն ընկնում—լալում էր:
 Մի հոտաւ շնիկ էլ շէմքումն ընկած,
 Հաջել չէր կարում՝ այնքան էր քաղցած:
 Մի քանի հաւեր քջուջ անելով
 Զունչ էին պահում միշտ կրկնալով:
 Օջաղի առաջ փալաս էր քցած,
 Հին-հին կապերտներ սնի տակ դարսած.
 Մի տեղ ընկած էր դրան փռչելը,
 Միւս տեղ՝ կասկարա, աւել, քերիչը:
 Մնիցը կախ էր հին դդալմանը,
 Թարեքին շարած աման-չամանը...
 Երեկոները ճրագ չէր վառվում,
 Կրակի լոյսն էր պատերին դիպչում:
 Ախ, ի՛նչպէս, ի՛նչպէս խեղճ էր այս տունը,
 Մինչ կտրուած էր տանըցոնց բունը...

«Թ՛ագուշ ջան, քուրիկ, Աստուած երկուսիս
 Կասես կրակ է տուել ծնողքիս.
 Տես ի՛նչպէս դառն է մեր օրերն անցնում,
 Ի՛նչպէս ամեն օր ծնողքս են լալում...»

Մի օր յուսահատ խօսեց Վարդուշը,
 Աչքերին դիպաւ ծակծկող փուշը:
 — Էլ ի՛նչ ես լալում, սիրելի Վարդուշ,
 Բախտներս շրջուել՝ դարձել է սուր փուշ:
 Մէկի եղբայրն է քրոջը պահում,
 Միւսի որդիքն են ծնողքին նայում.
 Մենք չունենք եղբայր, բարի աղջական,
 Ո՞վ մեզ կը պահի, առն, սիրական...
 Տեսնում ես, արդէն հայրիկն է ընկել,
 Մայրիկը ոտաց վրայ չորացել.
 Այս բաւական չէ... մեր դարդը նրանց
 Սիրտը կռծում է, թողնում շամփրտած...
 Արի մենք ևս մի կողմը թողնենք
 Ունայն ամօթը, աշխատենք, գործենք.
 Աշխատանքի դէմ չը կայ գժուար բան,
 Նա մահից անդամ պահում է մարդկան...

Այսպէս քուրերը իրար հետ սիրով
 Աւտեցին գործել, գործել անվրդով:

Թագուշը զիտէր երկրագործութիւն,
 Հատ էլ սիրում էր ասղնեգործութիւն:
 Հնձին՝ ուրիշի արտն էր նա հնձում,
 Խոտհարքին՝ վարձով խոտ էր ժողովում,
 Կալին՝ ուրիշի կալն էր նա կալսում,
 Քաղհանին՝ վարձով քաղհան էր անում.
 Խօսքով, նա քաջի գործ էր կատարում,
 Իսկ ցուրտ ձմեռը ասեղին զիմում...

Սիրուն Վարդուշը մի ոտքով կաղ էր,
 Տանից դուրս դալն էլ ամաչում էր:
 Իրանց տան մօտին բրուտխանայ կար.
 Բրուտը հայ էր, զարիբ էր, օտար:
 Վարդուշն ու մայրը ալդ բրտի մօտին
 Ամեն օր վարձով ծառայում էին —
 Վախտ ցեխ շաղախում, վախտ տունը մաքրում,
 Վախտ չարխը սրբում, ուսով ջուր կրում...
 Երկու տարուց չետ Վարդուշը սովրեց
 Բրտի փէշակը-աջնտեղ չը բանեց:
 Նա աջնուհետեւ մի շալի սահմանեց
 Իրանց տան միջին ու բանել սկսեց:
 «Ի՛հ, բանս վատ է, էլ ինձ ինչ օգուտ,
 Քանի Վարդուշն էլ դարձաւ բրուտ»:

Այսպէս մտածեց վարպետը անճար,
 Մտքի տունն ընկաւ՝ մնաց խիստ շուար...

Այսպէս շարունակ երկու քոյրերը
 Ասլանների պէս դարձան տան սիւնը:
 Թագուշը հօր հետ վարձկան մշակ էր,
 Վարդուշը մօր հետ բրուտ — վարպետ էր:
 Այս աշխատասէր խեղճ աղջիկները
 Դէպ իրենց քաջեցին շատի սրտերը:
 Բոլոր գիւղացիք լաւ էին տեսնում
 Նրանց տանջանքը և միշտ կարեկցում:
 Հատ երկտասարդ մտադրուեցին
 Մինին թէ միւսին առնել իրանց կին:
 Աղջկանց համբուր ուրիշ զիւղ հասաւ,
 Ամեն տեղ ասում-խօսում էին լաւ:

«Ես մշակ մարդ եմ, պէտք է ունենամ
 Ինձ պէս մշակ կին, որ դարդ չունենամ»:

Այսպէս մտածեց մի օտարական,
 Եկաւ, կին առաւ Թագուշ աղջկան:
 Ոմանք աչք դրին Վարդուշին առնել,
 Բայց սա չ'ուզեց նրանց կին լինել:

Վարդուշի բախտը եղաւ բրուտը,
Այդ էր պահանջում երկսի օգուտը:
Բրուտը վերցրեց իր սիրուն կինը,
Գնաց այդ գիւղից դէպ իր հօր տունը:
Թագուշին հարգանք իրանց տուն տարան:
Այդպէս երկուսն էլ մուրադի հասան...

Այս անցքից չետոյ անցան ամիսներ:
Գարունը բացուեց. եկան լաւ օրեր:
Ծնողքը աղջկանց կարօտել էին,
Նրանց տեսութեան փափագել էին:
Հայրը իր ցուպը վերցրեց դուրս եկաւ,
Չատ գնաց թէ քիչ, ոչ ոք չիմացաւ:
Վերջապէս գտաւ նա իր Թագուշին,
Համբուրեց, գրկեց, սխմեց իր գոշին...
Ջուր բերին, նորա ոտքը լուացին,
Լաւ լաւ կերակրով նրան կշտացրին:

«Թագուշ ջան, ո՞նց էք, դէ ասա, պատմիր,
Ի՞նչպէս էք ապրում, ո՞նց է էս երկիրը»:
— Հայրիկ, շատ լաւ ենք, ունենք շատ ցանքեր,
Էլ տեղ չենք թողել, ցանել ենք սերմեր.

Աղօթք արա, որ առատ անձրև գայ,
Յանաճը մէկին հաղարով կը տայ...

«Որդի, Աստուած տայ,

Որ անձրև շատ գայ...»

Այսպէս նա օրհնեց, թողեց Թագուշին,
Չատ գնաց թէ քիչ՝ գտաւ Վարդուշին:
Նորան էլ գրկեց, դուռեց ու հարցրեց,
Եւ իր հարցերի պատասխանն ուղեց.
— Սերելի հայրիկ, կաւէ ամաններ
Չատ շատ ենք շինել, դոմի մէջ դարսել.
Դու աղօթք արա, որ անձրև չը գայ,
Մեզ արև է պէտք, թող արև դուրս գայ,
Որ մենք մի կողմից ամաններ շինենք,
Միւս կողմից չորցնենք, ալրենք ու ծախենք...

«Որդի, Աստուած տայ,

Որ անձրև չը գայ...»

Մի գիւղի հանդին անձրև էր շոյում,
Միւս գիւղի գլխին վառ արև փայլում:

Թագուշանք այնքան ցորեն վերցրին,
Մինչ ամբար-հորեր ածեցին, լցրին:
Վարդուշանք այնքան աման ունեցան,
Աման ծախեցին, որ հարստացան:
Եւ այնուհետեւ բարի փեսայքը
Ապահովեցին աներոջ կեանքը...



ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐ.

Մեր զիւղացու հարսանիքում
Տղերքն ուրախ եալլի են խաղում,
Կռնաբռնուկ ծլլաշարվում,
Կրնկակոխ քալում, շարժվում,
Ապա քաղցր ձայնով երգում.

«Եալլին ա հա, եալլին ա,
Մեր սիրտ, ձեր սիրտ բարին ա.
Հէնց էս խաղի տարին ա.
Հըլէ, հըլէ, բարին ա,
Հէնց էս խաղի տարին ա.,.»

«Հաւաք բոլորուենք,
Իրար թեւ բռնե՛նք,
Ո՛տք-ոտքի խփենք,
Ծուռ-ծնկի զարկենք,
Գետինը շարժենք...»

«Մին ձախ, մին աջ,
Հէյ, հայ, հէյ, հայ.
Թռչենք առաջ,
Հայ-հույ, հայ-հույ...»

Ահա այդպէս թռչկոտում են,
Իրանք իրանց կոտրտում են.
Առաջ կամաց—ծանր ու օրօ՛ր,
Յետոյ միջո՛յ, ապա յարդար...

«Ասա տեսնեմ, մեր զիւղում
Կովերն ինչպէս են կթում»:
—Ահա այդպէս են կթում—
Հորթին կապում մօր ծնկնից,
Ծեծը խշմաւ հաւաքելից...

Կովկիթն իրանց ձեռքն առնում,

Ապա կողքին կրկրդում—

Փը՛շշ-բը՛ժժ...

Փը՛շշ-բը՛ժժ...

Ահա այսպէս են կթում,

Փոքրիկ հորթին լացացնում:

«Լաց մի՛ լինի, իմ հորթիկ,

Լաց մի՛ լինի, անուշիկ,

Ես քեզ համար իմ կրծում

Կաթ պահեցի մի կողմում.

Հիմա ծծիր, կշտացիր,

Յետոյ խաղա, վազվզիր...»:

«Ո՞րն են հարում խոյին,

Հէնց այսօր էլ հարեցին»:

—Ահա այսպէս հարեցին—

Թուր ծառից կապեցին,

Հաստ խնոցին կախեցին.

Երկուշաբթուայ հաւաքը

Նորա մէջը ածեցին,

Տաք ու հով ջուր խառնեցին.

Ապա ծայրից բռնելով,

Տարան, բերին, շարժեցին—

Թրը՛խկ-չրը՛խկ...

Չրը՛խկ-թրը՛խկ...

Ահա, այսպէս հարեցին,

Դեղին կարագ հանեցին:



ՊԱՐՏՔԱՏԻՐ.

Կալի մէջ մաքուր ցորենն է Լէշ տուած,

Եւ մի հաստափոր կողքին է կանգնած.

«Դէ չափենք, Հանէս, ցորեն շատ ունեն,

Հինգ թաղար թէ վեց չէ՞ որ ինձ պարտ ես»:

—Աղա ջան, պարտ եմ, թող սերմս վերցնեմ,

Մնացածը քեզ տամ—հոգիս ազատեմ...

«Առաջ պարտքդ տուր, սերմ վերցնել չը կայ.

Յետոյ ինչ կը մնայ, էն քեզ սերմ արա...»:

Յուրտ է և սուտու,

Կապ է դուռն ու կտուր:

«Տօ մարդ Աստուծոյ, ի՞նչ ես միտք անում,
Ի՞նչ ես կուրծնել, մոլորուած մնում.
Տունս լուացած՝ տաշտում չը կայ Հաց,
Տէս, երեխայքը մնացել են քաղցած...
Գնա էն Վերդունց ոտի տակն ընկիր,
Ու մի թաղար Հաց իր շահովն ուզիր...»
Մարդը շուարած՝ տանից դուրս գնաց,
Արտասունք դառը աչքերում ցոլաց...
Եւ անցն տան մայրը Համ բուրդը մանեց,
Համ իր ցաւերը այս երգով մեղմեց.

«Տ՛մ - տա, տ՛մ — տա, ձին ա զալիս,

Բախրի փշին՝ շաղ ա տալիս.

Խեղճ մարդկերանց սեւ սիրտ տալիս...

Խեղճ ու նաչար, վայ ձեր օրին,

Էրնակ կը տաք գարէ Հացին...»

Իսկոյն ճռւաց Հաստուիկ դուռը,

Մտաւ աղքատ, պարզեց բուրդը.

«Հոգուտ մեռնեմ, նանի, բաջի,

Ողորմութիւն արա ինձի.

Ո՛հ, անօրէն թուրքեր, քուրդեր
Մեզ թախնեցին, տունս քանդեցին,
Ջաւկըներուս ալ գերեցին...
Ես ընկել եմ սարեր-ձորեր,
Չատ կամաջեմ մուրալ, ուզեր...
Հոգիդ սիրեմ, նանի, բաջի,
Ողորմութիւն արա ինձի...»

Յորեն, դարի, ալիւր չը կար,
Հաց ու պանիր, խունկ-մոմ չը կար.
Խեղճ տան մայրը ճարահատած՝
Ջրով լիքը փռլէ վերցրեց,
Ամաչելով այս խօսքն ասեց.
— Բաբի, մեր տանն էլ բան չը կայ,
Ա՛ռ, ջուր խմի, սիրտդ հովնայ...
Արդար բերնովդ աղօթիք արա,
Որ մեզ պէսին Տէրն ողորմայ...

Մուրացկանը խոր ան քաշեց,
Իր պարկիցը մի Հաց Հանեց.
«Իմ սեւ բախտէն դու ան խեղճ ես,
Ա՛ռ էս Հացը, կեր դու, մեղք ես...»:



ՄԻՆԸ ԵՐԿՈՒՄԻՆ.

Փաղիկ կայ — անունը մանուշակ,
Աղջկանն էլ կասեն — Մանուշակ,
Փաղիկ մանուշակ,
Աղջիկ անուշակ:
Երկրիս վրայ երկուսն էլ զարդ են,
Երկուսն էլ սիրուն, քաղցր հոտ ունեն —
Մինը մարդկութեան,
Միւսը բնութեան...

* * *

Խնձոր կայ — կարմրաթշիկ,
Խնձոր կայ — աչեր պըշիկ.
Փառի պտուղը՝ խնձոր,
Եղան անունը՝ խնձոր.


Մինը ուտելու.

Միւսը լծելու...

Նարգիզ կայ — ծաղիկ է,
Նարգիզ կայ — կովիկ է.

Փաղիկին անուշ հոտ,
Կովիկին սիրուն հորթ.

Մինը դուրեկան,
Միւսը սիրեկան...



ՄՅՐ ԴԱՆԴԱՆԸ

(Երեսային ծնկները վրայ խաղացնելիս)

«Դան, դան — դնդոց ես,
Մեղրով լիքը քթոց ես,
Վէր քցելու նայինք ես,
Ծոց դնելու լուրինք ես...

Դու մեծանաս, մեծ մարդ դառնաս,
Հօրն ու մօրդ ճրագ դառնաս.
Ցաւը քեզնից հեռու մնայ,
Իս թաթերդ ուժեղանայ.
Ոտիկներդ շատ պնդանայ.
Լեզուիդ կապը բացուի, ձէն տայ.

— Ես մեծացայ՝ մեծ մարդ դարձայ,
 Դործիք տուէք, որ բան շինեմ,
 Սրեր տուէք՝ որսեր անեմ,
 Չար գազանի սիրտը պատուեմ...
 Ես էլ կասեմ. Առ, իմ դաւակ,
 Հօրդ ժանգոտ թուրն ու դաշնակ,
 Գնա՛ քաջի առաջն ընկի,
 Աստղերի հետ դու խնդս բռնի...
 Յետոյ արի՛ գութան վարի,
 Յորեն ցանի, ցորեն հնձի,
 Հօրդ պարտքը տո՛ւր, վճարի...

Դան, դան—դնգոց ես,
 Մեղրով լիքը քթոց ես,
 Վեր քցելու նախնի՛նչ ես,
 Ծոց դնելու լուսնի՛նչ ես...



ՀՀ Ազգային գրադարան



NI_0685851

11. Ուխտաւորք, գործ ՎԵՆԵԼՄ Հաուհի . . — 4.
 12. Գառնուկ և Լուսաոտանիկ, վէպեր Քրիս-
 տափոր Շմիդտի — Ժարգմ. Նուարդ . . — 75
 13. Սայեաթ Նովա, ազգային երգիչ . . . — 25
 14. Ծննդեան պատմութիւնը և Մայիսեան
 տօնը Յինդեանդիայում . . . — 5
 15. Ագաթանգեղեայ պատմութիւն . . . — 10
 16. Գիւղական Խալիֆայ, պ. Ա. Արարա-
 ւեանցի . . . — 1 —
 17. Վանայ Սաղ, պ. Գ. Շէրենցի . . . — 50
 18. Վանայ Սաղ, պ. Գ. Շէրենցի . . . — 75

Բացի սոցանից նոյն տեղերում վաճառվում են
 Բնկերութեան հետեւալ գրքերը.

1. Ուսումնարանների առողջապահութեան
 հարցեր, բժ. Ա. Բաբայեանի . . . — 1 —
 2. Կրքեր և նոցա ազդեցութիւնը առող-
 ջութեան վերայ, բժ. Ա. Բաբայեանի . . — 30

